Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Նորամարգի Ա. Քաղեշյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի /16/ և ֆիզկուլտուրայի /13/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում՝/Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն/Ձև 5/,

-այլ պետությունների քաղաքացիները՝Հ Հ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),

-որակաորման տարակարգ ունենալու դոպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ-ի հոկտեմբերի 9-ից մինչև հոկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ-ի հոկտեմբերի 26-ին ժամը 14:00 , ՀՀ Արարատի մարզի Նորամարգի Ա. Քաղեշյանի անվան միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ Արարատի մարզ, գյուղ Նորամարգ, 17-րդ փողոց, շենք 39:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 77-49-31 հեռախոսահամարով: